



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

АГЕНТСТВО ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ СОБСТВЕННОСТИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱԳԻՐ

ОФИЦИАЛЬНЫЙ
БЮЛЛЕТЕНЬ

№ 6

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ПРОМЫШЛЕННАЯ СОБСТВЕННОСТЬ

Սույն տեղեկագրում
գետեղված տեղեկությունները
համարվում են հրապարակված 2013 թվականի հունիսի 25-ից

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՅՈՒՏԵՐ	4, 78
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	6, 80
ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ	9, 82
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	11, 84
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ.....	14, 86
<i>Տեղեկություններ գրանցված արդյունաբերական նմուշների մասին</i>	16, 88
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	18
<i>Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին</i>	20
<i>Տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման մասին</i>	71
ՑՈՒՑԻՉՆԵՐ	72
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	74
ԵՐԿՏԱՌ ԿՈԴԵՐԸ	89

Հրատարակվում է Մտավոր սեփականության գործակալության կողմից 1995թ.

0010, Երևան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. 563-267 հայտերի ընդունման բաժին
Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական ապահովման բաժին

Издается Агентством интеллектуальной собственности с 1995г.

0010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3
Тел. (374 10) 563-267 отдел приема заявок
Тел. (374 10) 561-126 отдел информационно-технологического обеспечения

СОДЕРЖАНИЕ

ИЗОБРЕТЕНИЯ.....	4, 78
Сведения о выданных патентах.....	6, 80
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ.....	9, 82
Сведения о выданных патентах.....	11, 84
ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ.....	14, 86
Сведения о зарегистрированных промышленных образцах.....	16, 88
ТОВАРНЫЕ ЗНАКИ.....	18
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	20
Сведения о продлении действия регистрации товарных знаков.....	71
УКАЗАТЕЛИ.....	72
СООБЩЕНИЯ.....	74
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ.....	89

CONTENTS

INVENTIONS.....	4, 78
Information on granted patents.....	6, 80
UTILITY MODELS.....	9, 82
Information on granted patents.....	11, 84
INDUSTRIAL DESIGNS.....	14, 86
Information on registered industrial designs.....	16, 88
TRADE MARKS.....	18
Information on registered trade marks and service marks	20
Information on renewal of effect of trademark registration	71
INDEXES.....	72
REPORTS.....	74
TWO-LETTER CODES.....	89

ԳՅՈՒՏԵՐ

Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի

- 11** *արտոնագրի համարը*
- 13** *փաստաթղթի տեսակի կոդը*
A գյուտի արտոնագիր
B արտոնագրառունակության մասին եզրակացություն
- 21** *հայտի համարը*
- 22** *հայտի ներկայացման թվականը*
- 23** *ցուցահանդեսային առաջնության թվականը*
- 31** *առաջին հայտի համարը*
- 32** *առաջին հայտի ներկայացման թվականը*
- 33** *երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը*
- 45** *գյուտի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը*
- 51** *միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)*
- 54** *գյուտի անվանումը*
- 56** *տեղեկատվության աղբյուրներ*
- 57** *գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը*
- 62** *ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը*
- 71** *հայտատուն, երկրի կոդը*
- 72** *գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը*
- 73** *արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը*
- 74** *արտոնագրային հավատարմատար*
- 85** *միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը*
- 86** *միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը*
- 87** *միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը*

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) **(2013.01)** (11) **2746** (13) **A**
A01G 15/00
E01H 13/00

(21) **AM20110169** (22) **02.12.2011**

(71) «ԷԿՈՍԵՐՎ ՀՀԿ» ՍՊԸ (AM)

(72) Արտաշես Կորյունի Առաքելյան (AM), Արսեն Ալեքսանդրի Հախումյան (AM)

(73) «ԷԿՈՍԵՐՎ ՀՀԿ» ՍՊԸ, 0006, Երևան, Գ.Նժդեհի 2, բն.24 (AM)

(54) **Կարկտի կանխարգելման ակուստիկական գեներատորի աշխատանքի ռեժիմների կառավարման եղանակ և կարկտի կանխարգելման ակուստիկական գեներատոր**

(57) Գյուտը վերաբերում է հիդրոոլերևութաբանության բնագավառին, մասնավորապես՝ մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ու նրանց կառավարման, կարկտի կանխազգուշացման և կանխարգելակման եղանակներին ու համակարգերին և կարող է կիրառվել գյուղատնտեսական մշակովի հողատարածությունների, այգիների ու հանրային այլ օբյեկտների հակակարկտային պաշտպանությունն ավտոմատ իրականացնելու համար:

Ըստ եղանակի փակ ծավալում, արտաքինից տրվող հրաման-ազդանշաններով իրականացնում են պայթուցիչ գազի հաջորդական պայթյուններ, որոնց հետևանքով գեներացնում ու ուղղորդվում են ուղղահայաց դեպի վեր անհրաժեշտ հզորությամբ և գերձայնային արագությամբ տարածվող հարվածային ալիքներ, չափում են երկնքի սեփական ռադիոջերմային ճառագայթման ազդանշանների հզորությունը, դրա մեծության արժեքը համեմատում են N թվով շեմային արժեքների հետ և դրա հիման վրա ձևավորում են ահազանգող կող-ազդանշան, փոխանցում այն կառավարման վահանին Եղանակն իրականացնում են համակարգի միջոցով, որն ունի կարկտի կանխարգելման ակուստիկական գեներատոր, որը ներառում է պայթյունի գլանաձև խցիկ, կոնաձև ուղղորդող փող, միացման փողրակ, օդի հոսքի կափարիչավոր պատուհաններ, գազի ներարկիչ, գազի մատակարարման համակարգ, բռնկիչ, կառավարման վահան, էլեկտրասնուցման

համակարգ և հեռակառավարման համակարգ, ունի նաև հայտնաբերող-ահազանգող սարք, որը ներառում է հաջորդաբար միացված ալեհավաք, ռադիոմետրիկ ընդունիչ, կառավարվող կոմպենսացնող սարք, բազմուղի կառավարվող շեմային սարք և ահազանգող սարք:

Բարձրացվում է համակարգի աշխատանքի արդյունավետությունն ու ավտոմատացվում է շահագործումը, 6 նկ.:

(51) **(2013.01)** (11) **2747** (13) **A**
A61F 5/00

(21) **AM20130010** (22) **07.02.2013**

(71) Նարեկ Զաքարյան (AM)

(72) Միքայել Հարությունյան (AM), Նարեկ Զաքարյան (AM), Սարիկ Ղազարյան (AM), Սուրեն Սարգսյան (AM)

(73) Նարեկ Զաքարյան, 3601, Վայոց Ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Միկոյան 12, բն 20 (AM)

(54) **Էկզոսկելետոն**

(57) Գյուտը վերաբերում է վերականգնողական տեխնիկային, մասնավորապես՝ մարդու շարժողական գործառույթներին նպաստող և դրանք վերականգնող սարքերին, որոնք կարող են կիրառվել հենաշարժողական ապարատի վնասվածքների հետևանքով դրանց ֆունկցիաների ժամանակավոր կամ մշտական կորստի դեպքում և տարեց մարդկանց օժանդակման համար:

Էկզոսկելետոնն ունի մարդու գոտկատեղին ամրակցվող իրան, ազդրային մոդուլներ, որոնք ամրացված են իրանին հողակապերի միջոցով՝ կոնքազդրային հողերի հատվածում և տեղակայված են ազդրի երկայնքով՝ դրա կողային մասում, իսկ ազդրերի հետ ամրացված են ամրակիչ գոտիների միջոցով, սրունքային մոդուլներ, որոնք ամրացված են ազդրային մոդուլներին հողակապերի միջոցով՝ ծնկային հողերի հատվածում, իսկ սրունքների հետ ամրացված են ամրակիչ գոտիների միջոցով, ոտնաթաթային մոդուլներ, որոնք մեկ ծայրով ամրացված են սրունքային մոդուլներին, մյուսով՝

կոշիկներին, երկու զույգ շարժաբերներ՝ որոնցից մեկ զույգը տեղակայված է կոնքազդրային հողերի հատվածում, իսկ մյուսը՝ ծնկային, իրանին ամրացված ուսապարկ, ուսապարկում տեղադրված մարտկոցներ և կառավարման համակարգ: Ոտնաթաթային մոդուլներին միակցված են երկու կարգավորվող անիվ, իրանին ամրակցված են երկու վերամբարձ մեխանիզմներ, որոնցից յուրաքանչյուրն ունի շարժաբեր, պտուտակային փոխանցում, դրա ելքին միացված սնամեջ ձող, որի ծայրին միացված է լրացուցիչ տանող անիվ:

Ընդլայնվում են էկզոսկելետոնի ֆունկցիոնալ հնարավորությունները՝ թույլ տալով այն օգտագործել որպես սայլակ, 3 նկ.:

(51) **(2013.01)** (11) **2748** (13) **A**
B82B 1/00
B82B 3/00

(21) **AM20130006** (22) **22.01.2013**

(71) «ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ», պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Էդուարդ Շառոյան (AM), Արամ Մանուկյան (AM), Արմեն Միրզախանյան (AM), Տաթևիկ Խաչատրյան (AM)

(73) «ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0203, Արագածոտնի մարզ, Աշտարակ 2 (AM)

(54) **Պղինձածխածնային նանոկոմպոզիտների ստացման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է պղինձածխածնային նանոկոմպոզիտների ստացման տեխնոլոգիային և կարող է օգտագործվել գազերի և հեղուկների համար նախատեսված զտիչներում, վառելիքային տարրերում, ինչպես նաև բետոնի ամրացման համար:

Պղինձածխածնային նանոկոմպոզիտների ստացման եղանակով պիրոլիզի են ենթարկում պղնձի ֆտալոցիանիդը: Համաձայն գյուտի, նախքան պիրոլիզը պղնձի ֆտալոցիանիդը կոնտեյների մեջ տեղադրելը, դրա մեջ ստեղծում

են մինչև 0,1 Պա ճնշմամբ վակուում, կոնտեյները տեղադրում են էլեկտրական վառարանի մեջ, որում պիրոլիզը անցկացնում են 3-100 րոպեի ընթացքում 650-1000°C ջերմաստիճանում, ապա կազմավորված պղնձի նանոմասնիկներով ածխածնային մատրիցը առանձնացնում են կոնտեյներից:

Պարզեցվում է եղանակը, ստացվում է պղինձածխածնային նանոկոմպոզիտ, 4 նկ.:

(51) **(2013.01)** (11) **2749** (13) **A**
C04B 38/00

(21) **AM20130034** (22) **12.03.2013**

(71) «Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Արծրունի Մարտիրոսի Սաֆարյան (AM), Թամարա Մերուժանի Սարգսյան (AM)

(73) «Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 105 (AM)

(54) **Հումքային խառնուրդ թեթև բետոնների պատրաստման համար**

(57) Գյուտը վերաբերում է շինարարական նյութերի արտադրության բնագավառին, մասնավորապես՝ թեթև բետոնների պատրաստման համար հումքային խառնուրդներին:

Հումքային խառնուրդը ներառում է հետևյալ բաղադրամասեր (զանգվ. %). ցեմենտ՝ 14.4 - 23.1, 5-10 մմ հատիկների չափերով փքած օբսիդիանի խճի չափամաս՝ 4.2-14.1, 10-20 մմ հատիկների չափերով փքած օբսիդիանի խճի չափամաս՝ 5.7-14.3, 20-40 մմ հատիկների չափերով փքած օբսիդիանի խճի չափամաս՝ 8.1-11.2, 2,5-5 մմ ավազահատիկների չափերով փքած օբսիդիանի չափամաս՝ 7.9-8.5, 1,25-2,5 մմ ավազահատիկների չափերով փքած օբսիդիանի չափամաս՝ 7.9-8.5, 1,25 մմ-ից փոքր ավազահատիկների չափերով փքած օբսիդիանի չափամաս՝ 9.5-10.0 և ջուր՝ մնացածը:

Բարձրացվում է բետոնի ամրությունը:

- (51) **(2013.01)** (11) **2750** (13) **A**
C12H 1/00
- (21) **AM20120177** (22) **17.12.2012**
- (71) «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ (AM)
- (72) Կարեն Նորիկի Կազումյան (AM), Ալեքսանդր Նորիկի Կազումյան (AM), Մանվել Ռոբերտի Սուքոյան (AM)
- (73) «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ, 0009, Երևան, Տերյան 74 (AM)
- (54) **Կաղնու փայտանյութի մշակման եղանակ**
- (57) Գյուտը վերաբերում է կոնյակագործությանը, մասնավորապես՝ կաղնու փայտանյութի

մշակմանը կոնյակի սպիրտի հասունացման համար:

Կաղնու փայտանյութը սառը և տաք ջրով լվանալուց հետո չորացնում են մինչև 10-12% խոնավության և ենթարկում ջերմամշակման՝ մինչև շագանակագույն երանգ ստանալը: Որպես կաղնու փայտանյութ օգտագործում են տակառի պատրաստումից առաջացած կաղնու մանր կտորներ: Ջերմամշակումը իրականացնում են կտորների անընդհատ խառնումով 165-200 °C ջերմաստիճանում 50-90 րոպեի ընթացքում:

Պարզեցվում է գործընթացը, բարձրանում է արդյունավետությունը և կրճատվում է գործընթացի տևողությունը, 1 նկ.:

**ՕԳՏԱԿԱՐ
ՄՈԴԵԼՆԵՐ**

Օգտակար մոդելներին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի

11	<i>արտոնագրի համարը</i>
13	<i>փաստաթղթի տեսակի կոդը</i> <i>U</i> <i>օգտակար մոդելի արտոնագիր</i>
21	<i>հայտի համարը</i>
22	<i>հայտի ներկայացման թվականը</i>
23	<i>ցուցահանդեսային առաջնության թվականը</i>
31	<i>առաջին հայտի համարը</i>
32	<i>առաջին հայտի ներկայացման թվականը</i>
33	<i>երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը</i>
45	<i>օգտակար մոդելի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը</i>
51	<i>միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)</i>
54	<i>օգտակար մոդելի անվանումը</i>
56	<i>տեղեկատվության աղբյուրներ</i>
57	<i>օգտակար մոդելի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը</i>
62	<i>ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը</i>
71	<i>հայտատուն, երկրի կոդը</i>
72	<i>օգտակար մոդելի հեղինակը (ները), երկրի կոդը</i>
73	<i>արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը</i>
74	<i>արտոնագրային հավատարմատար</i>
85	<i>միջազգային հայտի (PCT) ազգային փուլ փոխադրման թվականը</i>
86	<i>միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը</i>
87	<i>միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը</i>

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

- (51) **(2013.01)** (11) **322** (13) **Ս**
A23B 4/00
 (21) **AM20130029U** (22) **06.03.2013**
 (71) Աշոտ Օհանյան (AM), Ռուզաննա Նահապետյան (AM)
 (72) Աշոտ Օհանյան (AM), Ռուզաննա Նահապետյան (AM)
 (73) Աշոտ Օհանյան, 0070, Երևան, II Աղյուսագործների 75/1 (AM), Ռուզաննա Նահապետյան, 0033, Երևան, Վ. Համբարձումյան 97 շենք, բն. 38 (AM)
(54) Բանջարեղենի թթվի պատրաստման եղանակ
 (57) Օգտակար մոդելը վերաբերում է սննդարդյունաբերությանը, մասնավորապես՝ բանջարեղենի թթվի պատրաստման եղանակին:

Բանջարեղենը լվանում են, մաքրում կեղևից, կտրատում, ավելացնում կերակրի աղ, տեղադրում տարայի մեջ, այնուհետև 2-3 օր պահում են զով միջավայրում: Բանջարեղենը կարտոֆիլ է, որը կտրատելուց հետո 22-26 ժամ պահում են սառույցով ջրի մեջ՝ 8-10 անգամ փոխելով ջուրը, հանում են ջրից, ապա կերակրի աղով համեմված զանգվածին ավելացնում են համային հավելումներ: Համային հավելումները՝ շաֆրանի չորացած ծաղիկները, շալֆելը, շաքարավազը, սպիտակ գինու քացախը, սխտորը, նեխուրը, չորացրած սամիթը, համեմի սերմը, կանաչ հատիկավոր պղպեղը և թարմ կարմիր տաքդեղը վերցված են բաղադրամասերի հետևյալ հարաբերակցությամբ (զանգվ. %). աղ 20- 22, շաֆրանի չորացած ծաղիկներ 7-8, շալֆել 6-8, շաքարավազ 10-12, սպիտակ գինու քացախ 10-11, սխտոր 8-10, նեխուր 14-15, չորացրած սամիթ 3-5, համեմի սերմ 3-5, կանաչ հատիկանոր պղպեղ 3-5, թարմ կարմիր պղպեղ 14- 15:

Ընդլայնվում է բանջարեղենի թթուների տեսականին:

- (51) **(2013.01)** (11) **323** (13) **Ս**
A47G 33/00
 (21) **AM20130015U** (22) **11.02.2013**
 (71) Աշոտ Վարազդատի Կիրակոսյան (AM)

- (72) Աշոտ Վարազդատի Կիրակոսյան (AM)
 (73) Աշոտ Վարազդատի Կիրակոսյան, 0032, Երևան, Բատիկյան փող.տ.60 (AM)
(54) Խունկ ծխեցնելու լրակազմ
 (57) Օգտակար մոդելը վերաբերում է ծխական արարողության, մասնավորապես՝ խունկ ծխեցնելու պարագաներին և կարող է օգտագործվել ինչպես տնային պայմաններում, այնպես էլ դրսում :

Խունկ ծխեցնելու լրակազմն ունի հիմք հանդիսացող տուփ, խունկի հատիկներ պարունակող հատվածամաս, տակդիր, ոտիկավոր հենակալ, ջերմության աղբյուր և կափարիչ: Առաջարկության համաձայն, խունկի հատիկներ պարունակող հատվածամասը իրականացված է հիմքի և կափարիչի միջև տեղակայված հանովի (միջանկյալ) տուփի տեսքով: Տակդիրը, ոտիկավոր հենակալը և ջերմության աղբյուրը փոխադրման դիրքում տեղավորված են հիմքի տուփի մեջ:

Բարձրացվում է դյուրակիրության աստիճանը, 3 նկ.:

- (51) **(2013.01)** (11) **324** (13) **Ս**
C02F 11/00
A01C 3/00
 (21) **AM20130004U** (22) **09.01.2013**
 (71) «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ (AM)
 (72) Ստյոպա Ենոքի Մարգարյան (AM), Հովիկ Հմայակի Գիշյան (AM), Արամ Գրիգորի Մազմանյան (AM), Սոս Վանիկի Սողոմոնյան (AM), Մարինե Վաչիկի Մխիթարյան (AM)
 (73) «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ, 0009, Երևան, Տերյան 74 (AM)
(54) Մեթանթենք
 (57) Օգտակար մոդելը վերաբերում է գյուղատնտեսությանը, մասնավորապես՝ օրգանական մնացորդների խմորման սարքերին:

Մեթանթենքն ունի գմբեթով և հատակով հերմետիկ ամբար, նրա մեջ տեղակայված արտաքին և ներքին խցեր, դեպի ներքին խուց

ջրիկ օրգանական մնացորդի մատուցման կցախողովակ, արտաքին խցին ամրակցված խմորված զանգվածի հեռացման կցախողովակ, նվազեցման փականով կենսազագի հեռացման խողովակ, զատիչ, որի մուտքին միակցված է ներքին խցից մշակված ջրիկ օրգանական մնացորդ մատուցող խողովակ, իսկ ելքին միակցված են ցնդող յուղաթթուները և թանձր զանգվածի հեռացման խողովակներ, օդառիչ, դրա ելքին միակցված օդի մատուցման կցախողովակ, կոմպրեսոր՝ դրա մուտքին միակցված ցնդող յուղաթթուների հեռացման և օդի մատուցման խողովակներով, ընդ որում կոմպրեսորը խողովակով միակցված է ներքին խցին, դրան ամրակցված հենարաններ, ներքին և արտաքին խցերի մտոցներ: Ունի նաև կենսազագի հեռացման խողովակին միակցված կոմպրեսոր, դրա ելքին միակցված կենսազագի հեղուկ զանգվածը դեպի ներքին խուց մատուցող կցախողովակ, ներքին խցում տեղակայված սնամեջ պատերով կենտրոնական խողովակ, դեպի այդ խողովակի պատերի ներսը ջերմակրի մատուցման և հեռացման խողովակներ, ներքին խցում կենտրոնական խողովակի շուրջը տեղակայված, ծակոտկեն մակերևույթով պատվող խառնիչներ:

Բարձրացվում է մեթանթենքի արդյունավետությունը, 1 նկ.:

(51) (2013.01) (11) 325 (13) U
C12G 3/00

- (21) AM20130008U (22) 05.02.2013
- (71) Մանվել Սուքոյան (AM)
- (72) Մանվել Սուքոյան (AM)
- (73) Մանվել Սուքոյան, 4003, Տավուշի մարզ, գյուղ Ակնաղբյուր (AM)
- (54) **Բրենդիի ստացման եղանակ**
- (57) Գյուտը վերաբերում է գինեգործությանը, մասնավորապես՝ բրենդիի ստացման եղանակներին:

Սպիրտը հասունացնում են կաղնու փայտից պատրաստած տակառներում, կուպաժավորում

են՝ ավելացնելով փափուկ ջուր և շաքարի օշարակ, մշակում են ցրտով և ֆիլտրում: Որպես սպիրտ վերցնում են սև սալորի, սերկևիլի, ծիրանի, տանձի և խնձորի 60-70%-անոց սպիրտների խառնուրդը՝ սպիրտների 1:2:3:4:10 ծավալային հարաբերակցությամբ, ընդ որում կուպաժավորում են նախքան հասունացումը՝ մինչև սպիրտի 42-45% ծավ. թնդության, իսկ հասունացումը կատարում են 30-35°C ջերմաստիճանում 3 ամսվա ընթացքում:

Բարձրանում է բրենդիի որակը:

(51) (2013.01) (11) 326 (13) U
C12H 1/00

- (21) AM20120167U (22) 20.11.2012
- (71) Սամվել Ղազարյան (AM)
- (72) Սամվել Ղազարյան (AM)
- (73) Սամվել Ղազարյան, 0028, Երևան, Արաբկիրի 38-րդ փող., 5 (AM)
- (54) **Սպիրտի հասունացման եղանակ**
- (57) Գյուտը վերաբերում է գինեգործությանը, մասնավորապես՝ սպիրտի հասունացման եղանակներին:

Սպիրտը հասունացնում են մանրացրած փայտանյութի առկայության պայմաններում, ընդ որում որպես փայտանյութ օգտագործում են ազնվամորու աշնանային էտի ցողունները, իսկ սպիրտը հասունացնում են առնվազն վեց ամսվա ընթացքում:

Բարձրացվում են սպիրտի զգայարանական հատկությունները:

(51) (2013.01) (11) 327 (13) U
H04L 9/00

- (21) AM20130009U (22) 06.02.2013
- (31) AM20120156 (32) 07.11.2012 (33) AM
- (71) Գուրգեն Գորիկի Հակոբյան (AM)
- (72) Գուրգեն Գորիկի Հակոբյան (AM), Նանար Վալդի Շահվերդյան (AM), Արա Էդվարդի Երեսսյան Նեգարչի (AM), Սերգեյ Հակոբի Սարգսյան (AM)
- (73) Գուրգեն Գորիկի Հակոբյան, 0019, Երևան, Անտառային 158/1, բն. 8 (AM)

(54) Ապրանքները կեղծիքից պաշտպանելու եղանակ

(57) Ըստ եղանակի ապրանքի վրա փակցնում են բաց և փակ կողերի զույգ պարունակող պիտակ: Կողերը գեներացնում են և պահպանում սերվերում գտնվող տվյալների շտեմարանում: Ապրանքի իսկության ստուգման համար հեռահաղորդակցման էլեկտրոնային միջոցի օգնությամբ կապ են ստեղծում սպառողի և սերվերի միջև: Առնվազն մեկ անգամ նշված կողերից մեկը փոխանցում են սերվեր: Սերվերում տեղադրված համակարգչային ծրագրի միջոցով ստանում են կողը, մշակում են այն, համեմատում

են տվյալների շտեմարանում պահպանված կողերի հետ և գեներացնում են պատասխան: Պատասխանը հեռահաղորդակցման էլեկտրոնային միջոցի օգնությամբ ուղարկում են սպառողին: Առաջարկված եղանակի համաձայն զույգի կողերից յուրաքանչյուրը գեներացնում են պատահականության սկզբունքով, որոնք նույնպես պատահականության սկզբունքով զուգակցում են միմյանց տվյալների շտեմարանում:

Բարձրացվում է ապրանքները կեղծիքից պաշտպանելու մակարդակը, 4 նկ.:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ
ՆՄՈՒՇՆԵՐ

**Արդյունաբերական նմուշներին վերաբերող
մատենագիտական տվյալների նույնականացման
միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.80 ստանդարտի**


11	<i>վկայագրի համարը</i>
13	<i>փաստաթղթի տեսակի կոդը S արդյունաբերական նմուշի վկայագիր</i>
21	<i>հայտի համարը</i>
22	<i>հայտի ստացման թվականը</i>
23	<i>ցուցահանդեսային առաջնության թվականը</i>
24	<i>գրանցման թվականը</i>
31	<i>առաջնային հայտի համարը</i>
32	<i>առաջնային հայտի ներկայացման թվականը</i>
33	<i>երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը</i>
51	<i>արդյունաբերական նմուշների միջազգային դասակարգման (ԱՆՄԴ) ցուցիչը (ները)</i>
54	<i>արդյունաբերական նմուշի անվանումը</i>
55	<i>արդյունաբերական նմուշի պատկերը (գծանկարը, լուսանկարը)</i>
71	<i>հայտատուն(ները), երկրի կոդը</i>
72	<i>հեղինակը(ները), երկրի կոդը</i>
73	<i>իրավատերը(երը), հասցեն, երկրի կոդը</i>
74	<i>արտոնագրային հավատարմատար</i>

Տեղեկություններ գրանցված արդյունաբերական նմուշների մասին


- (51) **06-01** (11) **314** (13) **S**
 (21) **20130017** (22) **28.03.2013**
 (71) Կարեն Ռոբերտի Դավթյան (AM)
 (72) Կարեն Դավթյան (AM), Կարեն Խաչիկյան (AM)
 (73) Կարեն Դավթյան, Երևան, Արցախի փ. 20 շ.,
 բն. 54 (AM), Կարեն Խաչիկյան, Երևան, Ավան,
 Խուդյակովի 47/1տ. (AM)
 (54) **Փոփոխական դարակաշար - պատ**
 (55)



1.1




1.3



1.4



1.2



1.5

- (51) 26-04 (11) 315 (13) S
- (21) 20130004 (22) 01.03.2013
- (71) Աշոտ Կիրակոսյան (AM)
- (72) Աշոտ Կիրակոսյան (AM)
- (73) Աշոտ Կիրակոսյան, Երևան, փ. Բ. Բատիկյան, տուն 60 (AM)
- (54) Կրակաման-կանթեղ
- (55)



1.1



1.2

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

ТОВАРНЫЕ ЗНАКИ

**Ապրանքային և սպասարկման նշանների վերաբերող
մատենագիտական տվյալների նույնականացման
միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.60 ստանդարտի**

111	գրանցման հերթական համարը
151	գրանցման թվականը (հանրահայտ ճանաչման թվականը)
152	թվականը, որից սկսած նշանը հանրահայտ է
181	գրանցման գործողության ենթադրյալ ավարտը
210	հայտի համարը
220	հայտի ներկայացման թվականը
230	ցուցահանդեսային կամ այլ առաջնության թվականը
310	առաջին հայտի համարը
320	կոնվենցիայով առաջնության թվականը
330	երկրի կողը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
442	հայտի հրապարակման թվականը
511	ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը
526	չպահպանվող տարրեր
540	ապրանքային նշանը
551	կոլեկտիվ կամ հավաստագրային նշան
554	ծավալային նշան
555	հոլոգրաֆիական նշան
556	ձայնային նշան
591	գույնը և գունային համակցությունը
646	իրավաբանորեն փոխկապակցված այլ գրանցման համարը և թվականը
730	նշանի իրավատերը, հասցեն, երկրի կողը
740	արտոնագրային հավատարմատար

Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին

(210) **20120853** (111) **19858**
(220) **28.06.2012** (151) **30.05.2013**
(181) **28.06.2022**

(730) Մանիկա Ս.ս.Ա., IT
(442) 08.10.2012
(540)

CURAME 25 WG

(511)
դաս 5. ֆունգիցիդներ:
(740) Ա. Գալոյան

(210) **20121230** (111) **19859**
(220) **05.09.2012** (151) **30.05.2013**
(181) **05.09.2022**
(730) «Սիս նատուրալ» ՍՊԸ, Արագածոտնի
մարզ, գ. Աղծք, AM
(442) 19.09.2012
(540)



(554) Ծավալային նշան
(511)
դաս 21. պոլիէթիլենային տարա.
դաս 32. բնական հյութեր, հանքային
և գազավորված ջրեր և այլ ոչ ալկոհոլային
լըմպելիքներ. մրգային ըմպելիքներ և մրգա-
հյութեր:

(210) **20121291** (111) **19860**
(220) **13.09.2012** (151) **30.05.2013**
(181) **13.09.2022**
(730) Վիքթորիա՝ս Սիքրիթ Սթորզ Բրենդ
Մենեջմենթ, Ինք., Դելավեր նահանգի
կորպորացիա, US
(442) 20.11.2012
(540)

LOVE PINK

(511)
դաս 3. անձնական խնամքի միջոցներ և
օժանելիքային արտադրանք, այն է՝ դուխիներ,
օժանելիք օդեկոլոն, անուշաբույր ջուր, մարմնի
հեղուկներ, մարմնի հեղուկացիրներ, մարմնի
սփրեյներ, մարմնի թեփազերծման միջոցներ,
փրփուրներ լոգանքի համար, լոգանքի ժելեր,
մարմնի վլացման միջոցներ, մարմնի օճառներ,
մարմնի յուղեր, մարմնի քսուքներ, մարմնի
լոսյոններ, մարմնի փոշիներ, ձեռքի լոսյոններ
և ձեռքի քսուքներ. կոսմետիկական միջոցներ,
այն է՝ միջոցներ աչքերի տակի թերությունների
քողարկման համար, աչքերի սովերաներկեր,
աչքերի ընդգծման միջոցներ, սևաներկ (տուշ),
աչքերի փայլավորման կոսմետիկական միջոցներ,
եղունգների լաքեր, դիմափոշի, կարմրաներկ,
հիմքեր շպարի համար և թերությունները
քողարկող միջոցներ, հեղուկ հիմքեր. շուրթերի
խնամքի դեղերով չտոգորված պատրաստուկներ,
շրթներկեր, շուրթերի բալասաններ, շուրթերին
ծավալ հաղորդող միջոցներ, փայլեր շուրթերի
համար, շուրթերը պայծառացնող միջոցներ,
հիմքեր շուրթերի համար, շուրթերը ընգծող

միջոցներ, շուրթերի քսուքներ, հիմքեր դեմքի համար, երանգավորող խոնավացնող միջոցներ, սնուցող քսուքներ, մաշկի լոսյոններ, շաքարի հեռացման միջոցներ, դեմքի քսուքներ, մաքրող քսուքներ, մաքրող ժելեր, դեմքի տոնուսը բարձրացնող միջոցներ, խոնավացնող միջոցներ, քսուքներ աչքերի մշակման համար, միջոցներ դեմքի մաշկի մեռած բջիջների հեռացման համար, մաշկի փայլազրկման միջոցներ, մաշկի և դեմքի բրոնզավորող փոշիներ, թերթիկները ծածկող փոշիներ, շողշողացող փոշիներ, աչքերի ստվերաներկերից, շրթներկերից, շուրթերի փայլերից, բրոնզներից, շուրթերի մատիտներից, սևաներկերից (տուշ), կարմրաներկերից և եղունգների լաքերից բաղկացած կոսմետիկական լրակազմեր:

դաս 14. Ժամացույցներ և ձեռքի ժամացույցներ. ոսկերչական իրեր, այն է՝ վզնոցներ, ապարանջաններ, ականջօղեր, ոսկերչական քորոցներ, մատանիներ, ոտքի ապարանջաններ, թևքաճարմանդներ, համայիլներ, թալիսմաններ, բրելոկներ, կախոցներ, թանկարժեք մետաղից պատրաստված տուփեր հաբերի համար:

դաս 18. կանացի պայուսակներ, տեղափոխման պայուսակներ բոլոր նպատակների համար, մեծ պայուսակներ, ճամփորդական պայուսակներ, ուսից կախվող պայուսակներ, քսակներ, կլատչ պայուսակներ, սուրհանդակների պայուսակներ, նախշազարդերով կտորից պայուսակներ, երեկոյան պայուսակներ, ձեռքից կախվող պայուսակներ, իրեղենի պարկեր, շների տեղափոխման համար պայուսակներ, գոտկային դրամապանակներ, ուսապարկեր, մարզիկների պայուսակներ, մարմնամարզիկների պայուսակներ, պայուսակներ երկարատև ճանապարհորդելու համար, համակարգիչների պայուսակներ, պորտֆելներ, ճամպրուկներ, ճանապարհորդական պայուսակներ հագուստի համար, տափակ ճամպրուկներ, լողափնյա պայուսակներ, տնտեսական պայուսակներ, փոքր պայուսակներ, դրամապանակներ, բանալիների պատյաններ, վարկաքարտերի պատյաններ, դատարկ վաճառվող կոսմետիկական պայուսակներ և պատյաններ, հովանոցներ, անձրևակալներ, անձնագրերի պատյաններ, մանրադրամի քսակներ, չեկերի պատյաններ և գոտիներ:


դաս 25. սպորտային տոպեր և կրծկալներ, վարտիքներ, տաբատներ և արդրավարտիքներ, կիսաշրջազգեստներ, կարճատաբատներ, T-աձև շապիկներ, ուսափոկերով շապիկներ, ջինսեր, բաճկոններ, վերարկուներ, շրջազգեստներ, մարզիկների հագուստ, հարսանեկան հագուստ, առօրյա հագուստ, տոնական հագուստ, հանդիսավոր հագուստ, մարմնամարզիկների հագուստ, հղիների հագուստ, սպորտային հագուստ, արևապաշտպան հագուստ, լողափնյա լայն հագուստ, լողափնյա հագուստ, սարոնգներ (ինդոնեզիական ժողովրդական հագուստ), լողազգեստներ, իրանակալներ (իրանը ձգող ներքնազգեստ), բոդիներ, կրծկալներ, բյուստյեններ (առանց կապերի կանացի տոպեր), լիֆեր, կանացի գիշերային կամ տնային լայն շապիկներ, կորսետներ, կախակապերով գոտիներ, տակի սպիտակեղեն, կիսավարտիքներ, կոմբինացիաներ, տղամարդու կիսավարտիքներ, ներքնաշապիկներ, ներքնազգեստ, բաճկոնակներ, բեյսբոլի կեպիներ, բոլորագլխարկներ, գլխակապեր, լոզանքի գլխարկներ, սպորտային գլխարկներ, ծղոտից գլխարկներ, արևային բոլորագլխարկներ, կոստյումներ, լողագլխարկներ, սպորտային կոշիկներ, լողափնյա կոշիկներ, առօրյա կոշիկներ, երեկոյան կոշիկներ, մարզանքի կոշիկներ, գուլպաներ, ձեռնոցներ, թաթմաններ, խալաթներ, տրիկոտաժե արտադրանք, երկար զանկապաններ, նեյլոնից զուգագուլպաներ, երկար գուլպաներ, զուգագուլպաներ, լոգարանի խալաթներ, կորսաժներ, հանգստին հարմար հագուստ, նեգլիթե (թեթև տնային հագուստ), գիշերային խալաթներ, գիշերանոցներ, պիժամաներ, գիշերային սպիտակեղեն, թեդիներ (կիսավարտիքից և վերնամասից բաղկացած կանացի ներքնազգեստ), շարֆեր, վզկապներ և կաշններ:

դաս 35. մանրաձախ խանութների ծառայություններ, մանրաձախ խանութների օնլայն ծառայություններ և փոստային պատվերների ծառայություններ, բոլորը վերաբերող հագուստի բնագավառին, ներառյալ՝ սպիտակեղենին և ներքնազգեստին, կաշվե իրերին, նորաձևության պարագաներին, ոսկերչական իրերին, կոշկեղենին, կոսմետիկական միջոցներին, անձնական խնամքի պարագաներին, ակնոցներին, պայուսակներին և կենցաղային ապրանքներին:

(740) Ան. Նահապետյան

(210) **20121300** (111) **19861**
 (220) **14.09.2012** (151) **30.05.2013**
 (181) **14.09.2022**

(730) Ակավա Լիմիթիդ, MT
 (442) 07.12.2012
 (540)



(526) «TEA» բառն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(511)

դաս 32. գարեջուր. հանքային և գազավորված ջրեր և այլ ոչ ալկոհոլային ըմպելիքներ. մրգային ըմպելիքներ և մրգահյութեր. օշարակներ և ըմպելիքների պատրաստման այլ բաղադրանյութեր:

(740) Ա. Գալոյան

(210) **20121304** (111) **19862**
 (220) **14.09.2012** (151) **30.05.2013**
 (181) **14.09.2022**

(730) Ակավա Լիմիթիդ, MT
 (442) 07.12.2012
 (540)



(511)

դաս 32. գարեջուր. հանքային և գազավորված ջրեր և այլ ոչ ալկոհոլային ըմպելիքներ. մրգային ըմպելիքներ և մրգահյութեր. օշարակներ և ըմպելիքների պատրաստման այլ բաղադրանյութեր:

(740) Ա. Գալոյան

(210) **20121338** (111) **19863**
 (220) **24.09.2012** (151) **30.05.2013**
 (181) **24.09.2022**

(730) Վան Հիս ԳմբՀ, DE
 (442) 17.01.2013
 (310) 011125853 (320) 17.08.2012 (330) EM
 (540)

Dekavis

(511)

դաս 1. քիմիական նյութեր մսամթերքի պահածոյացման, էմուլսացման, մանր կտրատման, ներկման և համեմման համար. էմուլգարարներ. համի ուժեղարարներ. համեմունքներ և համեմունքի խառնուրդներ կրող նյութեր (համեմունքներ) սննդամթերքի պատրաստման համար, որոնք ընդգրկված են 1-ին դասում.

դաս 29. միս, ձուկ, թռչնամիս և որսամիս. երշիկեղեն. մսի էքստրակտներ. չորացրած կաթնամթերք. շիճուկ, կաթնաշաքար և կաթնապրոտեիններ և դրանցից պատրաստված արտադրանք, որն ընդկրկված է 29-րդ դասում. պահածոյացված, չորացրած և ջերմային մշակման ենթարկված բանջարեղեն. կենդանական և բանջարեղենային սպիտակուցներ, դրանցից պատրաստված արտադրանք սննդի համար.

դաս 30. աղ, մանանեխ. քացախ, սոուսներ (համեմունքներ). ամոքանք, համեմունքի և ամոքանքի էքստրակտներ. համեմված աղեր. համի ուժեղարարներ. համեմունքներ և համեմունքի խառնուրդներ պարունակող նյութեր (համեմունքներ) սննդամթերքի պատրաստման համար, որոնք ընդգրկված են 30 -րդ դասում. խոտաբույսեր (պահածոյացված). սննդային օսլա. մոդիֆիկացված օսլա սննդի համար:

(740) Ա. Գալոյան

(210) **20121356** (111) **19864**
 (220) **01.10.2012** (151) **30.05.2013**
 (181) **01.10.2022**

(730) Վիքթորիա՝ս Սիքրիթ Սթորգ Բրենդ Մենեջմենթ, Ինք., Դելավեր նահանգի կորպորացիա, US

(442) 20.11.2012
(540)



(511)

դաս 3. անձնական խնամքի միջոցներ և օժանելիքային արտադրանք, այն է՝ դուխսիներ, օժանելիք, օդեկոլոն, անուշաբույր ջուր, մարմնի հեղուկներ, մարմնի հեղուկացիրներ, մարմնի սփրեյներ, մարմնի թեփազերծման միջոցներ, փրփուրներ լոգանքի համար, լոգանքի ժելեր, մարմնի լվացման միջոցներ, մարմնի օճառներ, մարմնի յուղեր, մարմնի քսուքներ, մարմնի լոսյոններ, մարմնի փոշիներ, ձեռքի լոսյոններ և ձեռքի քսուքներ. կոսմետիկական միջոցներ, այն է՝ միջոցներ աչքերի տակի թերուպյունների քողարկման համար, աչքերի ստվերաներկեր, աչքերի ընդգծման միջոցներ, սևաներկ, աչքերի փայլավորման կոսմետիկական միջոցներ, եղունգների լաքեր, դիմափոշի, կարմրաներկ, հիմքեր շպարի համար և թերուպյունները քողարկող միջոցներ, հեղուկ հիմքեր. շուրթերի խնամքի դեղերով չտոգորված պատրաստուկներ, շրթներկեր, շուրթերի բալասաններ, շուրթերին ծավալ հաղորդող միջոցներ, փայլեր շուրթերի համար, շուրթերը պայծառացնող միջոցներ, հիմքեր շուրթերի համար, շուրթերը ընգծող միջոցներ, շուրթերի քսուքներ, հիմքեր դեմքի համար, երանգավորող խոնավացնող միջոցներ, սնուցող քսուքներ, մաշկի լոսյոններ, շպարի հեռացման միջոցներ, դեմքի քսուքներ, մաքրող քսուքներ, մաքրող ժելեր, դեմքի տոնուսը բարձրացնող միջոցներ, խոնավացնող միջոցներ, քսուքներ աչքերի մշակման համար, միջոցներ դեմքի մաշկի մեռած բջիջների հեռացման համար, մաշկի փայլազրկման միջոցներ, մաշկի և դեմքի բրոնզավորող փոշիներ, թերուպյունները ծածկող փոշիներ, շողշողացող փոշիներ, աչքերի ստվերաներկերից, շրթներկերից, շուրթերի փայլերից, բրոնզներից, շուրթերի մատիտներից, սևաներկերից, կարմրաներկերից և եղունգների լաքերից բաղկացած կոսմետիկական լրակազմեր.

դաս 25. սպորտային տոպեր և կրծկալներ, վարտիքներ, տաբատներ և անդրավարտիքներ, կիսաշրջազգեստներ, կարճատաբատներ, T-աձև շապիկներ, ուսափոկերով շապիկներ, ջինսեր, բաճկոններ, վերարկուներ, շրջազգեստներ, մարզիկների հագուստ, հարսանեկան հագուստ, առօրյա հագուստ, տոնական հագուստ, հանդիսավոր հագուստ, մարմնամարզիկների հագուստ, հոյների հագուստ, սպորտային հագուստ, արևապաշտպան հագուստ, լողափնյա լայն հագուստ, լողափնյա հագուստ, սարոնգներ (ինդոնեզիական ժողովրդական հագուստ), լողազգեստներ, իրանակալներ (իրանը ձգող ներքնազգեստ), բողիներ, կրծկալներ, բյուստյեններ (առանց կապերի կանացի տոպեր), կրծքակալներ, կանացի գիշերային կամ տնային լայն շապիկներ, կորսետներ, կապիչներ, կախակապերով գոտիներ, տակի սպիտակեղեն, կիսավարտիքներ, կոմբինացիաներ, կարճ կիսավարտիքներ, ներքնաշապիկներ, ներքնազգեստ, բաճկոնակներ, բեյսբոլի կեպիներ, բոլորագլխարկներ, գլխակապեր, լոգանքի գլխարկներ, սպորտային գլխարկներ, ծղոտից գլխարկներ, արևային բոլորագլխարկներ, կոստյումներ, լողագլխարկներ, սպորտային կոշիկներ, լողափնյա կոշիկներ, առօրյա կոշիկներ, երեկոյան կոշիկներ, մարզանքի կոշիկներ, գուլպաներ, ձեռնոցներ, թաթմաններ, խալաթներ, տրիկոտաժե արտադրանք, երկար գանկապաններ, նեյլոնից զուգագուլպաներ, երկար գուլպաներ (չուլկիներ), զուգագուլպաներ, լոգարանի խալաթներ, խալաթներ, կորսաժներ, հանգստին հարմար հագուստ, նեգլիժե (թեթև տնային հագուստ), գիշերային խալաթներ, գիշերանոցներ, պիժամաներ, գիշերային սպիտակեղեն, սեղմիրանային կիսավարտիքներ, թեդիներ (կիսավարտիքից և վերնամասից բաղկացած կանացի ներքնազգեստ), շարՖեր, վզկապներ և կաշններ.

դաս 35. մանրածախ խանութների ծառայություններ, մանրածախ խանութների օնլայն ծառայություններ և փոստային պատվերների ծառայություններ, բոլորը վերաբերող հագուստի բնագավառին, ներառյալ՝ սպիտակեղենին և ներքնազգեստին, կաշվե իրերին, նորածնության պարագաներին, ոսկերչական իրերին, կոշկեղենին, կոսմետիկական միջոցներին, անձնական խնամքի պարագաներին, ակնոցներին, պայուսակներին և կենցաղային ապրանքներին:
(740) Ան. Նահապետյան

(210) 20121395 (111) 19865
 (220) 12.10.2012 (151) 30.05.2013
 (181) 12.10.2022

(730) ՌԵՔ Արբեմիքս ՓԻ.Էս.Սի., AE
 (442) 20.12.2012
 (540)



(591) Նշանը պահպանվում է կարմիր և բեժ գունային համակցությամբ:

(511) դաս 8. դանակավոր իրեր, այն է՝ պատառաքաղներ, դանակներ, գդալներ, սեղանի սպասք (ոչ թանկարժեք մետաղներից)։

դաս 21. խոհանոցային կամ տնային կահկարասի և սպասք՝ պատրաստված ճենապակուց, ոսկրե ճենապակուց և ապակուց, ճաշի սպասք՝ պատրաստված ճենապակուց, ոսկրե ճենապակուց և ապակուց, շշեր, լազաններ, օճառամաններ, սրբիչների կախիչներ, զուգարանի թղթի բռնիչներ։

դաս 24. սեղանի ծածկոցներ:
 (740) Ալ. Նահապետյան

(210) 20121406 (111) 19866
 (220) 15.10.2012 (151) 30.05.2013
 (181) 15.10.2022

(730) «Ա-Թիվի» ՍՊԸ, Երևան, Գ. Նժդեհի 56/2, AM
 (442) 05.11.2012
 (540)

**ԸՆՏԱՆԵԿԱՆ
 ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

(511) դաս 38. հեռահաղորդակցություն.
 դաս 41. կրթություն (դաստիարակություն, ուսուցում). ուսումնական գործընթացի ապահովում, զվարճություններ. մարզական և մշակութային միջոցառումների կազմակերպում, (հեռուստաձրագրերի, հեռուստահաղորդման պատրաստում):

(210) 20121485 (111) 19867
 (220) 01.11.2012 (151) 30.05.2013
 (181) 01.11.2022

(730) «Բրեյնդ» ՍՊԸ, 0019, Երևան, Սոսեի փող., տուն 30, AM
 (442) 20.11.2012
 (540)



(591) Նշանը պահպանվում է կապույտ և սև գունային համակցությամբ:

(511) դաս 35. գովազդ. գործերի կառավարում գործարարության ասպարեզում. վարչարարական գործունեություն գործարարության ասպարեզում. գրասենյակային ծառայություններ. բրենդավորում. մարքեթինգային հետազոտություններ, գործարար խորհրդատվություն.

դաս 38. հեռահաղորդակցություն.
 դաս 42. գիտական և տեխնոլոգիական ծառայություններ և հետազոտություններ և դրանց հետ կապված մշակումներ. արդյունաբերական վերլուծումներ և հետազոտություններ. համակարգչային ապարատների և ծրագրերի մշակում և կատարելագործում. գրաֆիկական դիզայն. վեբ-դիզայն:

(210) 20121498 (111) 19868
 (220) 06.11.2012 (151) 30.05.2013
 (181) 06.11.2022

(730) «Բենե» ՍՊԸ, 0070, Երևան, Վարդանանց 28, ք. 53, AM
 (442) 20.11.2012
 (540)

**BEL FIORE
 ԲԵԼ ՖԻՈՐԵ**

(511) դաս 30. սուրճ, թեյ, կակաո և սուրճի փոխարինիչներ. հացահատիկային մթերքներ, հաց, հրուշակեղեն և քաղցրավենիք, պաղպաղակ. շաքար, մեղր.

դաս 31. հացահատիկ, գյուղատնտեսական, այգեգործական, անտառային և հացահատիկային մթերքներ, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. թարմ մրգեր և բանջարեղեն. սերմեր, բնական բույսեր և ծաղիկներ:

(210) **20121539** (111) **19869**
 (220) **15.11.2012** (151) **30.05.2013**
 (181) **15.11.2022**

(730) Ա.Ք. Ջոնսոն ընդ Սան, Ինք., Վիսկոնսինի նահանգ, US
 (442) 20.12.2012
 (540)

FOOTSILK

(511) դաս 3. ոտքի խնամքի միջոցներ (ոչ բժշկական), աներոզոլներ՝ ոտքերը կոշիկներում շփումից պաշտպանելու համար (ոչ բժշկական):
 (740) Ան. Նահապետյան

(210) **20121550** (111) **19870**
 (220) **20.11.2012** (151) **30.05.2013**
 (181) **20.11.2022**

(730) «Արքա պրոդակտ» ՍՊԸ, Երևան, Նոր Նորքի համայնք, 3-րդ մ/շ., 33ա շ., 1-ին բն., AM
 (442) 07.12.2012
 (540)



(591) Նշանը պահպանվում է կապույտ և երկնագույն գույներով:
 (511) դաս 35. մանրամեծաձախ առևտուր:

(210) **20121557** (111) **19871**
 (220) **21.11.2012** (151) **30.05.2013**
 (181) **21.11.2022**

(730) «Արագիլ սթայլ» ՍՊԸ, Երևան, Նալբանդյան 29, բն. 26, AM
 (442) 20.12.2012
 (540)



(591) Նշանը պահպանվում է կարմիր, սև և սպիտակ գունային համակցությամբ:
 (511) դաս 29. աղցաններ.
 դաս 30. կիսաֆարրիկատներ, մասնավորապես՝ նրբաբլիթներ, կարկանդակներ (մսային և բանջարեղենային). թխվածքներ, պելմեններ, խինկալի, կարկանդակ:

(210) **20121593** (111) **19872**
 (220) **27.11.2012** (151) **30.05.2013**
 (181) **27.11.2022**

(730) Սիլագ ԳմբՀ Ինթերնեշնլ, CH
 (442) 17.01.2013
 (540)

METROGYL DENTA

(511) դաս 5. դեղագործական և անասնաբուժական պատրաստուկներ. հիգիենիկ ապրանքներ բուժական նպատակների համար. բժշկական ապրանքներ, դեղային պատրաստուկներ բուժական նպատակների համար. քիմիական պատրաստուկներ, նյութեր բուժական նպատակների համար:
 (740) Ան. Նահապետյան

(210) **20121594** (111) **19873**
 (220) **27.11.2012** (151) **30.05.2013**
 (181) **27.11.2022**

(730) Սիլագ ԳմբՀ Ինթըրնեշնլ, CH
(442) 17.01.2013
(540)



(591) Նշանը պահպանվում է սպիտակ, մոխրագույն, վարդագույն, կապույտ, երկնագույն գունային համակցությամբ:

(511) դաս 5. դեղագործական և անասնաբուժական պատրաստուկներ. հիգիենիկ ապրանքներ բուժական նպատակների համար. բժշկական ապրանքներ, դեղային պատրաստուկներ բուժական նպատակների համար. քիմիական պատրաստուկներ, նյութեր բուժական նպատակների համար:

(740) Ան. Նահապետյան

(210) **20121595** (111) **19874**
(220) **27.11.2012** (151) **30.05.2013**
(181) **27.11.2022**

(730) Սիլագ ԳմբՀ Ինթըրնեշնլ, CH
(442) 17.01.2013
(540)



(591) Նշանը պահպանվում է մոխրագույն, բաց մոխրագույն, մուգ կապույտ գունային համակցությամբ:

(511) դաս 5. դեղագործական և անասնաբուժական պատրաստուկներ. հիգիենիկ ապրանքներ բուժական նպատակների համար. բժշկական ապրանքներ, դեղային պատրաստուկներ բուժական նպատակների համար. քիմիական պատրաստուկներ, նյութեր բուժական նպատակների համար:

(740) Ան. Նահապետյան

(210) **20121616** (111) **19875**
(220) **29.11.2012** (151) **30.05.2013**
(181) **29.11.2022**

(730) «Արտ թիմ» ՍՊԸ, Երևան, Վարդանանց 18, AM

(442) 20.12.2012
(540)

ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆ

(511) դաս 41. երաժշտական փառատոների կազմակերպում. կինոփառատոների կազմակերպում:

(210) **20121626** (111) **19876**
(220) **03.12.2012** (151) **30.05.2013**
(181) **03.12.2022**

(730) Շենժեն Յոնգնուո Ֆոտոգրաֆիք Էքզիվիմենթ Քո., Լթդ., CN

(442) 06.02.2013
(540)

YONGNUO

(511) դաս 9. օպտիկական ոսպնյակներ, օբյեկտիվներ (օպտիկա), լուսանկարչական ապարատներ, բռնկալամպեր (լուսանկարչություն), շարժական հեռախոսներ, տեսագրման սարքեր, կինոնկարահանման խցիկներ, համակարգիչներ, հեռակառավարման սարքավորումներ, լուսանկարչական փականներ, էլեկտրական կուտակիչների լիցքավորման սարքեր, տպիչներ:

(740) Վ. Պետրոսյան

(210) **20121658** (111) **19877**
(220) **07.12.2012** (151) **30.05.2013**
(181) **07.12.2022**

(730) «Արմֆարմ» ՍՊԸ, Երևան, Շինարարների 8, քն. 1, AM

(442) 20.12.2012
(540)

SubRociTronn

(511)

դաս 5. դեղագործական և անասնաբուժական պատրաստուկներ. հիգիենիկ պատրաստուկներ բուժական նպատակների համար. դիետիկ նյութեր բուժական նպատակների համար, մանկական սնունդ. սպեղանալաթեր, վիրակապման նյութեր. ատամնալցման և ատամների ծեփապատճեններ պատրաստելու նյութեր. ախտահանիչ միջոցներ. վնասատու կենդանիների ոչնչացման պատրաստուկներ. ֆունգիցիդներ, հերբիցիդներ:

(210) 20121659

(220) 07.12.2012

(730) «Արմֆարմ» ՍՊԸ, Երևան, Շինարարների 8, բն. 1, AM

(442) 20.12.2012

(540)

TienTronn

(511)

դաս 5. դեղագործական և անասնաբուժական պատրաստուկներ. հիգիենիկ պատրաստուկներ բուժական նպատակների համար. դիետիկ նյութեր բուժական նպատակների համար, մանկական սնունդ. սպեղանալաթեր, վիրակապման նյութեր. ատամնալցման և ատամների ծեփապատճեններ պատրաստելու նյութեր. ախտահանիչ միջոցներ. վնասատու կենդանիների ոչնչացման պատրաստուկներ. ֆունգիցիդներ, հերբիցիդներ:

(210) 20121660

(220) 07.12.2012

(730) «Արմֆարմ» ՍՊԸ, Երևան, Շինարարների 8, բն. 1, AM

(442) 20.12.2012

(540)

RopenTronn

(511)

դաս 5. դեղագործական և անասնաբուժական պատրաստուկներ. հիգիենիկ պատրաստուկներ բուժական նպատակների համար. դիետիկ նյութեր բուժական նպատակների համար, մանկական սնունդ. սպեղանալաթեր, վիրակապման նյութեր. ատամնալցման և ատամների ծեփապատճեններ պատրաստելու նյութեր. ախտահանիչ միջոցներ. վնասատու կենդանիների ոչնչացման պատրաստուկներ. ֆունգիցիդներ, հերբիցիդներ:

(210) 20121663

(220) 07.12.2012

(730) Ուինդհամ Հոթելը ընդ Ռիզորթս, ԼԼՔ, US

(442) 06.02.2013

(540)

WYNDHAM

(511)

դաս 43. առողջարանային հյուրանոցների, հյուրանոցների, մոթելների և ռեստորանների ծառայություններ. ժամանակավոր կացարանների տրամադրման ծառայություններ. հանգստավայրի վարձակալման ծառայություններ. ժամանակավոր կացարանների ամրագրում երրորդ անձանց համար. հյուրընկալման ծառայություններ, այն է՝ բնակատեղով, սննդամթերքով և ըմպելիքներով ապահովում. հյուրանոցային համարների, բնակատեղերի և ժամանակավոր կացարանների տրամադրման, գրանցման և ամրագրման ծառայություններ. ռեստորանների նախօրոք պատվիրման ծառայություններ:

(740) Ալ. Նահապետյան

(210) 20121664

(220) 07.12.2012

(730) Ուինդհամ Հոթելը ընդ Ռիզորթս, ԼԼՔ, US

(442) 06.02.2013

(540)

WYNDHAM GARDEN

(511)

դաս 43. առողջարանային հյուրանոցների, հյուրանոցների, մոթելների և ռեստորանների ծառայություններ. ժամանակավոր կացարանների տրամադրման ծառայություններ. հանգստավայրի վարձակալման ծառայություններ. ժամանակավոր կացարանների ամրագրում երրորդ անձանց համար. հյուրընկալման ծառայություններ, այն է՝ բնակատեղով, սննդամթերքով և ընպելիքներով ապահովում. հյուրանոցային համարների, բնակատեղերի և ժամանակավոր կացարանների տրամադրման, գրանցման և ամրագրման ծառայություններ. ռեստորանների նախօրոք պատվիրման ծառայություններ:

(740) Ալ. Նահապետյան

(210) **20121665** (111) **19882**
 (220) **07.12.2012** (151) **30.05.2013**
 (181) **07.12.2022**

(730) Ուինդհամ Հոթելզ ընդ Ռիզորթս, ԼԼՔ, US
 (442) 06.02.2013

(540)

WYNDHAM GRAND

(511)

դաս 43. առողջարանային հյուրանոցների, հյուրանոցների, մոթելների և ռեստորանների ծառայություններ. ժամանակավոր կացարանների տրամադրման ծառայություններ. հանգստավայրի վարձակալման ծառայություններ. ժամանակավոր կացարանների ամրագրում երրորդ անձանց համար. հյուրընկալման ծառայություններ, այն է՝ բնակատեղով, սննդամթերքով և ընպելիքներով ապահովում. հյուրանոցային համարների, բնակատեղերի և ժամանակավոր կացարանների տրամադրման, գրանցման և ամրագրման ծառայություններ. ռեստորանների նախօրոք պատվիրման ծառայություններ:

(740) Ալ. Նահապետյան

(210) **20121689** (111) **19883**
 (220) **13.12.2012** (151) **30.05.2013**
 (181) **13.12.2022**

(730) «Ա-Թիվի» ՍՊԸ, Երևան, Գ. Նժդեհի 56/2, AM
 (442) 17.01.2013

(540)

ԲԱՆ ՈՒ ԳՈՐԾ

(511)

դաս 38. հեռահաղորդակցություն.

դաս 41. կրթություն (դաստիարակություն, ուսուցում). ուսումնական գործընթացի ապահովում, զվարճություններ. մարզական և մշակութային միջոցառումների կազմակերպում, (հեռուստաձրագրերի, հեռուստահաղորդման պատրաստում):

(210) **20121717** (111) **19884**
 (220) **19.12.2012** (151) **30.05.2013**
 (181) **19.12.2022**

(730) Թամրոն Քո., Լթդ., JP
 (442) 06.02.2013

(540)

TAMRON

(511)

